Հայոց եւս ինքեանց 'ի տարւոջ միանգամ յաւուր տօնի Ս. Յակոբայ որդւոյն Զեբեթեայ պատարագել 'ի վանս Հայոց 'ի տաճարի սորոյն ։ Եւ այս խնդիր կարեւոր կացեալ յերերի իբր ամս 40 յետ այնորիկ կարգադրեալ լցէ 'ի ժողովին Սիօնի, ուր էր յայնժամ Ս. Հայրապետն Հայոց Տէր Գրիգորիս, զորմէ ունիմք ասել 'ի ստորեւ, եւ Ալբերիկոս եպիսկոպոսն Նուիրակ Պապին ։ Սակայն չգտանեմք ստուգագոյն աւանդութիւն ինչ վասն այսր 'ի գիրս Հայոց եւ մեք չկամիմք զհետ երթալ սնոտի աւանդութեանց այլոց ։ Իսկ Մարինոս վանահայր Լատին վանօրէից՝ կացեալ պատմիչ 'ի սկիզբն 17 դարու, այսպէս պատմէ 'ի պատմութեան Ս. Երկրին. « Ի վերայ գերեզմանի Ս. Կուսին ոչ ոք կարէ պատարագել առանց հրամանի մեծաւորին մերոյ, որ է պահապան Ս. Տեղեաց. բայց շնորհեցին Հայոց յաւուրս չորեքշաբաթուց պատարագել անդ փոխարէն այնր բարեաց, զոր շնորհեցին Հայք Լատինաց 'ի տարւոջ միանգամ պատարագել յեկեղեցին Ս. Յակոբայ, եւ միանգամ եւս 'ի վանս Ս. Փրկչի յաւուր Պէնտէկոստէի » ։ Բանք Մարինոսի հային 'ի յետին ժամանակս, մանաւանդ զի յետ տիրելոյ Սալահատտինի Ս. Երկրին՝ Լատինք իսպառ մերժեցան անտի, իսկ Հայք կացին մնացին դարձեալ 'ի տեղիս իւրեանց մնեալ ընդ իշխանութեամբ այնր Պետութեան, որպէս յայտ առնեն զայս Արաբացի հրովարտակք ։ Եւ զկնի ժամանակաց, յորժամ ընդարձակութիւն գտին Լատինք և եկին յԵրուսաղէմ և դարձեալ մտին 'ի գերեզմանն Ս. Աստուածածնի, անդ գտին զՀայս և զՅոյնըս և ընկերութեամբ ժառանգեցին զՏեղին Ս. մինչեւ 'ի թուականն 1758, յորում իսպառ զրկեցան յեկեղեցւոյ անտի, զորոց տեսցուք 'ի կարգի իւրեանց ։

Յաւուրս հայրապետութեան Մեծին Գրիգորի վկայասիրի պատահեցաւ դարձեալ այլայլութիւն Զատկի՝ որ ասի Ծռազատիկ, որպէս պատահեալ էր յառաջագոյն, և ունէր պատահիլ միշտ 'ի 95 տարւոջ միանգամ 'ի վարիլն նովին տոմարաւ. զի ամենայն քրիստոնեայք տօնեցին զԶատիկն միով եօթնեկաւ յառաջ յաւուր Ծաղկազարդի բաց 'ի Հայոց և Ասորւոց. զի թէպէտ և Լատինք չասէին ինչ վասն այսր, սակայն Յոյնք ունէին հակառակութիւն